ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Մ. ԱՐԻՖ (Բաքու)

Հոկտեմբերյան ռևոլյուցիան, ճնշված ժողովուրդներին տալով քաղաքական և տնտեսական ազատություն, նոր դարաշրջան բացեց նրանց հոգևոր զարգացման համար։

Ադրբեջանում Սովետական իշխանություն հաստատելուց հետո ձեռնարկվեցին անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի երկիրն ընթանա կուլտուրական աճի ճանապարհով, ժողովուրդը հաղորդակից դառնա համաշխարհային կուլտուրային, ժամանակակից գիտության ու տեխնիկայի նվաճումներին։ Ռևոլյուցիայի կողմից ազատագրված ժողովրդական տաղանդները ոտք դրին անարգել առաջադիմության ուղին։

Սկսած 1920 թվականից Սովետական պետության կարևորագույն միջոցառումները լուսավորության ու դիտության, գրականության և արվեստի բնագավառում ուղղված էին այն բանին, որպեսզի մի կողմից արագ կերպով վերացվի այն հետամնացությունը, որը ժառանգություն էր մնացել բուրժուա-կալվածատիրական կարգերից, մյուս կողմից՝ համաշխարհային գիտության ու կուլտուրայի նվաճումները տարածվեն ժողովրդական լայն զանգվածների մեջ, ստեղծվեն նոր կադրեր, առանց որոնց աներևակայելի կլիներ սոցիալիստական կուլտուրայի բարգավաճումը։ Կազմակերպվեցին նոր ինստիտուտներ և հիմնարկություններ, որոնք ընդգրկում էին ժողովրդի հոգևոր կյանքի բոլոր բնագավառները։ Ռուս մասնագետների ղեկավարությամբ և օգնությամբ կարճ ժամանակամիջոցում աճեցին ադրբեջանցի երիտասարդ կադրեր՝ գիտության ու կուլտուրայի գործիչներ։ Լենինյան ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ օրեցօր ընդլայնվում էր կուլտուրական շինարարությունը Ադրբեջանում։ Ծաղկեց ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական ադրբեջանական սովետական կուլտուրան։ Այդ բարգավաճման վառ արտահայտությունը մենք տեսնում ենք գեղարվեստական գրականության բնագավառում նկատվող հսկայական նվաճումների մեջ։

Իր զարգացման մեջ ազգային դասական գրականության, ինչպես նաև ռուս գրականության առաջավոր տրադիցիաների վրա հենվող ադրբեջանական սովետական գրականությունը իր դաղափարական նպատակասլացությամբ և ստեղծագործական մեթոդով նոր գրականություն է։

Սովետական գրականությունը ամրապնդվել է ամեն տեսակի ազգային սահմանափակվածության դրսևորումների, բուրժուական ռեակցիոն գաղափարախոսության և դրական հին նորմաների դեմ մղվող պայքարում։ Օգտվելով

սոցիալիստական ռեալիզմի ստեղծագործական մեթոդից, ճշմարտացիորեն արտացոլելով սոցիալիստական շինարարության հազթանակները և սովետական մարդկանց ստեղծարար գործունեությունը, մեր գրողները ստեղծել են գեղարվեստական ինքնատիպ գործեր՝ գեղարվեստական գրականության բոլոր ժանրերի գծով։ Սովետական ժամանակաշրջանում զգալիորեն ընդլայնվեցին ադրբեջանական բազմադարյան պոեզիայի շրջանակները։ Փոխվեց բանաստեղծների լիրիկական հերոսը. կյանքից զժգոհ, լալագին թախծող, իսկ երբեմն էլ խրատամոլության հերոսին պոեզիայում փոխարինելու եկավ մեր դարաշրջանի ակտիվ, կամքի տեր մարդը՝ նոր կյանքի կերտողը։ Սովետական բանաստեղծների վիպերգական ստեղծագործություններում սոցիալիզմ կառուցողների գեղարվեստական կերպարներին զուգընթաց վառ կերպով մարմնավորվել է աշխատավորների պատմական պայքարը հանուն ազատության։ Սամեդ Վուրգունի «Մահվան նստարան», «Նեգրը խոսում է...», «Դարի դրոշակակիրը», Իսասու Ռզայի «Գերմանիա», «Լենին», Մահմեդ Ռահիմի «Լենինգրադի վրա» պոեմներում գեղարվեստական արտացոլում են գտել ժողովրդի խոր մարդկային զգացումները և մեծ իղձերը։

Ադրբեջանական սովետական պոեզիան հանդիսացավ ամենաբարձր դաղափարների՝ պրոլետարական հումանիզմի, հայրենասիրության, ժողովուրդների բարեկամության, խաղաղության ու դեմոկրատիայի մունետիկ։ Սուլեյման Ռուստամի, Սամեդ Վուրգունի, Մահմեդ Ռահիմի, Ռասուլ Ռզայի, Օսման Սարիվելու, Ահմեդ Ջամիլի, Նիգյար Ռաֆիբեյլու, Միրվելի Դիլբազու, Բախտիար Վահաբզադեի և այլ բանաստեղծների լավագույն ստեղծագործությունները մտան սովետական պոեզիայի ոսկե ֆոնդը։

Ինչպես հայտնի է, մինչ ռևոլյուցիան վիպական ժանրը ադրբեջանական գրականության մեջ սաղմնային վիճակում էր գտնվում։ Սովետական գրողների ստեղծագործական ջանքերի շնորհիվ այդ ժանրը ներկայումս գրավում է աչքի ընկնող տեղ։ Սովետական իշխանության տարիներին աճեցին բազմաթիվ վիպագիրներ, ստեղծվեցին տասնյակ հոյակապ վեպեր, որոնց թվում կարելի է նշել Սուլեյման Ռահիմովի «Շամո» եռահատոր վեպ-դյուցազներգությունը, Աբուլհասանի «Բարեկամության բաստիոնը», Մեհտի Հուսեյինի «Ապշերոնը» և «Առավոտը», Միրզա Իբրահիմովի «Կգա օրը» և «Գետերի միախառնումը» և այլն։

Նշված վեպերում արտացոլված են ադրբեջանական, ռուս և ուրիշ եղբայրական ժողովուրդների պայքարը Սովետական իշխանության համար, մեր մարդկանց կողմից աշխատանքում և մարտում ցուցաբերած համարձակությունը և խիզախությունը, սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման պայմաններում նրանց ձեռք բերած հոգեկան նոր հատկությունները և բարոյական կերպարը։ Նրանցից լավագույնները լայնորեն հայտնի են ոչ միայն Սովետական Միության մեջ, այլև արտասահմանում։ Մեհտի Հուսեյինի «Ապշերոն» և Միրզա Իբրահիմովի «Կգա օրը» և ուրիշ վեպեր թարգմանված են աշխարհի շատ լեզուներով։

Գեղարվեստական գրականության բուռն աճը, նրա տեսական-գաղափարական հաջողությունները և նվաճումները հնարավոր դարձան Կոմունիստական պարտիայի հոգատարության և անմիջական ղեկավարության շնորհիվ։ Կենտրոնական Կոմիտեն իր պատմական որոշումներում ոչ միայն ժամանակին հիշեցնում էր գրողներին և քննադատներին սովետական գրականության առաջ կանգնած խնդիրների մասին, այլև տալիս էր այդ խնդիրների կենսագործման կոնկ-

րետ ծրագրեր։ Սովետական գրողները, ոգեշնչված պարտիայի և նրա Կենտրոնական Կոմիտեի ցուցումներով, էլ ավելի ամրապնդեցին գրականության կապը կյանքի հետ, իրենց ստեղծագործություններում առաջ քաշելով կոմունիստական շինարարության կարևորագույն հարցեր, իրենց գեղարվեստական կերպարներում մարմնավորելով մեր մարդկանց հոգեկան նոր գծերը։

Սովետական բազմազգ գրականության բաղկացուցիչ մասը հանդիսացող ադրբեջանական սովետական գրականությունը, որն արժեքավոր ավանդ է ներմուծել սոցիալիստական կուլտուրայի գանձարանը, աճում և ամրապնդվում է իր առաջընթացում եղբայրական սովետական ժողովուրդների ընտանիքում, նրանց գրականությունների հետ փոխներգործության մեջ, ռուս մեծ գրականության անմիջական օգնության և բարերար ազդեցության պայմաններում։ Տարակույս չկա, որ եղբայրական ժողովուրդների գրականությունների փոխադարձ կապը և փոխազդեցությունը այսուհետև էլ կաճեն և ավելի մեծ չափեր կընդունեն։

Գեղարվեստական գրականության զարգացումը շատ բանով նպաստեց նաև թատերական արվեստի առաջադիմությանը։ Ադրբեջանական թատրոնը, ամուր կապեր ունենալով ռեալիստական տրադիցիաների հետ և ոգեշնչվելով աշխատավոր ժողովրդի շահերով, Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից իր ռեպերտուարը կազմեց համաձայն նոր պահանջմունքների։ Ստեղծվեցին նոր թատրոններ, այդ թվում, ռևոլյուցիայի առաջին տարիներին քաղ-դաստիարակչական կարևոր դեր կատարած «Երգիծանքի և ագիտացիայի թատրոնը»։ Թատրոնների ռեպերտուարը հարստացավ ադրբեջանական սովետական դրամատուրգիայի հիմնադիր Ջաֆար Ջաբարլիի, ինչպես նաև Սամեդ Վուրղունի, Միրզա Իբրահիմովի, Սաբիտ Ռահմանի, Մեհտի Հուսեյինի, Էնվեր Մամեդխանլիի, Սուլեյման Ռուստամի և ուրիշների նոր, բարձր գեղարվեստական ստեղծագործություններով։ Այդ գրողների կողմից ստեղծված դրամատիկական գործերի կարևորագույն առանձնահատկությունը այն է, որ դրանց մեջ գաղափարական ու գեղարվեստական առավել լիակատարությամբ շոշափվում են արդի գարաշրջանի կենսական հարցերը։ Իր «Սևիլ», «Ալմաս», «1905 թվականին», «Յաշար» պիեսներում Ջաֆար Ջաբարլին, հետևելով սոցիալիստական ռեալիզմի ստեղծագործական մեթոդին, տվել է առաջավոր սովետական մարդկանց կենդանի կերպարներ, դրական հերոսների մի ամբողջ շարք։ Սովետական թատրոնի կյանքում նշանակալից իրադարձություն հանդիսացան Սամեդ Վուրղունի «Վագիֆ», «Ֆարհադ ու Շիրին» և «Խանլար» բանաստեղծական դրամաները, որոնք արտացոլում են ադրբեջանական ժողովրդի պատմության վառ էջերը։

Ադրբեջանական սովետական դրամատուրգիան շարունակում է զարգանալ ռուս և համաշխարհային գրականության ամենաառաջադեմ տրադիցիաների հիման վրա։ Մեր թատրոնների ռեպերտուարների հարստացումը ընթանում է դերասանական վարպետության աճին զուգընթաց։ Եթե անցյալում կանացի դերերը կատարում էին տղամարդիկ, ապա այժմ ադրբեջանական դերասանուհիները վարպետորեն կատարում են դրամատուրգ-կլասիկների պիեսների ամենաբարդ կանացի դերեր։ Բեմական արվեստի խոշոր վարպետների կողքին են Ա. Մ. Շերիֆզադեն, Մարղիա-իսանումը, Ուլվի Ռաջաբը, Միրզա-Աղա Ալիևը, Սիղգի Ռուխարան, Ռզա Թահմասիբը, Քյասիմ Ջիյան, սովետական ժամանակաշրջանում աճեց տաղանդավոր դերասանների ու թատերական գործիչների

մի ամբողջ բանակ (Իդայատզադ Ա. Իսքենդերով, Ալի Կուրբանով, Ա. Գերայ-թեյլի, Սոնա Հաջիևա, Հեկյամ Կուրբանովա, Մուստաֆա Մարդանով, Բարատ Շեկինսկայա, Մոխսունա Սանան, Իսմայիլ Թալիբլի, Ալի Զեյնալով և ուրիշներ)։ Ռեսպուբլիկայի Ակադեմիական դրամատիկական թատրոնը, բացի ադրբեջանական գրողների գործերից, հաջողությամբ բեմադրում է ռուս և համաշխարհային գրականության կլասիկների՝ Շեքսպիրի, Շիլլերի, Մոլիերի, Գոգոլի, Օստրովսկու, Չեխովի, Գորկու, ինչպես և հայ անվանի դրամատուրգ Գիրվանզադեի և ուրիշների լավագույն գործերը։ Թատրոնը վճռական պայքար մղելով ֆատալիզմի, ազգային սահմանափակվածության և արվեստի մեջ ռեակցիոն հոսանքների դրսևորումների դեմ, հաստատում է ժողովրդականության ու կոմունիստական դաղափարականության սկզբունքները։

Ադրբեջանական թատրոնի դաղափարա-դեղարվեստական զարգացման գործում նշանակալից դեր կատարեց թատերական գործիչների առաջավոր փորձը։ Այդ են վկայում արվեստի հաճախակի անցկացվող օլիմպիադաները և տասնօրյակները, ստեղծագործական դիտումները, Մոսկվայի և ադրբեջանական թատրոնների սիստեմատիկաբար համատեղ անցկացվող աշխատանքները։

Դրամատիկական թատրոնին համահավասար չտեսնված հաջողություններ հասան նաև երաժշտական և օպերային արվեստը։ Ստեղծվել են ժողովրդական մասսաների աճած կուլտուրական պահանջմունքներին համապատասխանող երաժշտական գործեր։

Աշխույժ վեճերը այն բանի շուրջը, թե ի՞նչ պետք է իրենից ներկայացնեն ազգային երաժշտությունը և ազգային օպերան, ինչպիսի՞ն պետք է լինեն ադրբեջանական կոմպոզիտորների երաժշտական ստեղծագործությունների բովանդակությունը և ձևը, չէին կարող չհանգեցնել ի վերջո տրադիցիաների ու նորարարության փոխհարաբերության, ժողովրդական երաժշտության և համաշխարհային դասական երաժշտության հարաբերության պարզաբանմանը։ Ադրբեջանական սովետական երաժշտությունը ամենևին չի ընթացել միակողմանի զարգացման ուղիով. լինելով բովանդակությամբ սոցիալիստական և ձևով ազգային, այն ներդաշնակում է իր մեջ ազգային դասական երաժշտության, ժողովրդական երգերի ռիթմիկ-մեղեդիական կառուցվածքը և ռուս ու համաշխարհային դասական երաժշտության սիմֆոնիզմը, նրան հավասարապես հարազատ են մուղամները և սիմֆոնիաները, աշուղական երգերը և ռոմանսները, թառն ու դաշնամուրը, ժողովրդական պարերը և բալետը։ Այդ բանի ցայտուն ապացույցն են Ադրբեջանում սովետական կոմպոզիտորների ստեղծած օպերաները, բալետները, սիմֆոնիաները, սիմֆոնիկ մուղամները։ Գլիերի «Նահ Սենեմ», Ուզեիր Հաջիբեկովի «Քյորօղլի», Մ. Մադոմանի «Նարգիզ», Ֆիքրետ Ամիրովի «Սևիլ» օպերաներում, Ա. Բադալբեյլիի «Կույսի աշտարակը», Կարա Կարաևի «Յոթ գեղեցկուհիներ» բալետներում, ինչպես նաև Ասեֆ Զեյնալիի, Զեվդեթ Հաջիևի, Նիյազիի, Սաիդ Ռուստամովի և ուրիշների սիմֆոնիաներում, երգերում ու ռոմանսներում վարպետորեն օգտագործված են ինչպես ադրբեջանական ժողովրդական երաժշտությունը, նույնպես և ժամանակակից երաժշտական կուլտուրայի նվաճումները։ Այդ ստեղծագործություններ մեծ հաջողությամբ կատարվում են նաև արտասահմանում։ Ֆիքրետ Ամիրովի «Շուր» ու «Քուրդ Օղլարի» և Նիյազիի «Ռաստ» սիմֆոնիկ մուղամները դնահատվում են արտասահմանում որպես ազգային երաժշտության միանգամայն ինքնատիպ նմուշներ։ Չեխոսլովակյան «Ռուդե պրա-

վո» թերթը գրել է, որ «Ռաստ» սիմֆոնիկ մուղամը մի գործ է, որի միջոցով ճանաչվում է ադրբեջանական ժողովրդի երաժշտական բարձր կուլտուրան և հեղինակի ստեղծագործական վարպետությունը։ Ֆրանսիական ամսագրերից մեկը նշում էր, որ «Շուր» սյուիտան օժտված է վեհությամբ և ճշմարտությամբ, որոնք յուրահատուկ են երաժշտական արվեստի խսկապես նշանավոր ստեղծագործություններին։

Ադրբեջանական կոմպոզիտորները հմտորեն օգտագործում են նաև այլ ժողովուրդների ազգային երաժշտությունը։ «Ալբանական ռապսոդիա» սիմֆոնիկ երկում և «Ամպրոպի արահետով» բալետում կոմպոզիտոր Կարա Կարաևը ցույց տվեց իր բանիմացությունը տարբեր ազգերի երաժշտական ստեղծագործության բնագավառում և ցուցաբերեց բարձր վարպետություն ինքնատիպ ժանրային պատկերներ ստեղծելու գործում։

Օպերան և բալետը դաստիարակել են բեմական արվեստի տաղանդավոր վարպետներ։ Մեծ են օպերային ականավոր դերասաններ ու դերասանուհիներ՝ Ի. Սարաբսկու, Բյուլ-Բյուլ Սամեդովի, Շելքեթ խանում Մամեդովայի, Ֆաթմա-խանում Մուխտարովայի ծառայությունները երիտասարդ տաղանդների դաստիարակման գործում։ Ստալինյան մրցանակի լաուրեատ, ՍՍՌՄ ժողովրդական դերասան Բյուլ-Բյուլ Մամեդովը ռեսպուբլիկայի ամենաուժեղ և ունակ օպերային կատարողներից մեկն է։ Նրա բազմակողմանի ստեղծագործության մեջ օրգանապես ձուլվել են ժողովրդական երաժշտության հարստություններն ու ժամանակակից երաժշտական տեխնիկայի նորագույն նվաճումները։ Լինելով ադրբեջանական պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, նա ներկայումս էլ զբաղված է երիտասարդ երգիչների դաստիարակման ազնիվ գործով։

Օպերային արվեստի զարգացման մեջ առանձնապես պետք է նշել Հաղիդատ Ռզաևայի, Մ. Տ. Բաղիրովի, Գ. Հաջիբաբաբեկովի, Ս. Բունիաթզադեի և ուրիշների դերը։ Նշանակալի իրադարձություն հանդիսացավ ադրբեջանական տաղանդավոր պարուհիների երևալը բեմի վրա։ Այն ժամանակ, երբ նախքան ռեվոլյուցիան կինը ընդհանրապես չէր կարող երևալ բեմի վրա, այժմ ադրբեջանական կանայք հաջողությամբ ելույթ են ունենում դասական և սովետական բալետներում։ Այդ գործում առանձնապես զգալի է ՍՍՌՄ ժողովրդական դերասանուհի Գամար Ալմասզադեի՝ ադրբեջանական առաջին պրիմաբալերինայի դերը։ Նրա ղեկավարությամբ իր հետագա զարգացումն է ստանում ազգային բալետը ու աճում է երիտասարդ պարուհիների վարպետությունը։ Լեյլա Վեքիլովան իր կատարողական վարպետությամբ կանգնած է համաշխարհային բալետային արվեստի բարձրության վրա։

Մեծ աշխատանք է կատարված Ադրբեջանում նաև կինոարվեստի ասպարեզում, որն իր սկիզբն առնում է 1923 թվականից, երբ էկրանների վրա հանդես եկան առաջին ադրբեջանական կինոնկարները։ Նրանց մեջ հատկապես աչքի էր ընկնում «Լեղենդ կույսի աշտարակի մասին» կինոնկարը։ Որոշ ժամանակ անց ադրբեջանական կինոն նվաճեց լայն ճանաչում շնորհիվ այնպիսի կինոնկարների, ինչպիսիք են՝ «Հաջի Կարան», «Սևիլ», «Ալմաս», «Գիլյանի դուստրը», «Բաքվեցիները», «Գյուղացիները» և այլն։ Այդ առաջին կինոնկարների ստեղծման ու կինոգործիչների տեղական կադրեր նախապատրաստելու գործում մեծ օգնություն ցույց տվեցին Մոսկվայի և Լենինգրադի խոշոր մասնագետները, հատկապես, կինոռեժիսյոր Համո Բեկ-Նազարյանը, սցենարիստ Գ. Մդիվանին և ուրիշներ։ Ադրբեջանական կինոարտադրության մեջ արմա-

տական բեկում տեղի ունեցավ 1953—1954 թվականներին։ ՍՍԿՊ 20-րդ համագումարը սովետական կինոգործիչների առջև դրեց թողարկվող կինոարտադրանքի որակի և քանակի բարձրացման կարևորագույն խնդիրները։

Պատասխանելով պարտիայի ու ժողովրդի պահանջներին, ադրբեջանական դրամատուրգները, ռեժիսյորները, կոմպոզիտորները, դերասանները, նկարիչները և օպերատորները համատեղ ջանքերով մի քանի տարիների ընթացքում ստեղծեցին բարձրորակ գեղարվեստական կինոնկարներ։ Դրանց թվում կարելի է նշել «Հեռավոր ափերում» (Սովետական Միության հերոս Մեհթի Հուսեյնզադեի մասին), «Խորթ մայրը», «Մի ամրոցի գաղտնիքը», «Եթե դշ նա, ապա սա» և ուրիշ կինոնկարներ։ «Պատմվածք Կասպիայի նավթագործների մասին» և «Ծովի նվաճողները» կինոնկարները վերջերս արժանացան Լենինյան մրցանակի։ Ներկայումս ադրբեջանական կինոն ապրում է իր ստեղծագործական հնարավորությունների ծաղկման շրջանը։

Սովետական իշխանության տարիներին մեծ տեղաշարժեր տեղի ունեցան կերպարվեստի՝ նկարչության, քանդակագործության ու ճարտարապետության բնագավառում։ Նարունակելով ականավոր ժողովրդական նկարիչ-երդիծաբան Ազիմ Ազիմզադեի ռեալիստական տրադիցիաները, տաղանդավոր նկարիչներ՝ Մ. Աբդուլաևը, Գ. Փաշիկովը, Ս. Բախլուզադեն, Ս. Սալամզադեն, Ի. Ախունդովը և ուրիշներ իրենց գեղարվեստական կտավներում կենդանացնում են սովետական մարդկանց աշխատանքային հերոսությունը, նրանց երջանիկ կյանքը, նոր կենցաղը, Ադրբեջանի գեղատեսիլ պեյզաժները։ Մոսկվայի, Լենինգրադի, Բաքվի, Թբիլիսիի և Սովետական Միության այլ քաղաքների գեղարվեստական ուսումնարաններում մասնագիտական կրթություն են ստանում ադրբեջանցի երիտասարդ նկարիչները և քանդակագործները։ Մեր նկարիչների գործերը ցուցադրվում են միութենական ու արտասահմանյան գեղարվեստական ցուցահանդեսներում։ Համաժողովրդական սեր են վայելում Ս. Միրզազադեի, Մ. Ռախմանզադեի և ուրիշների շինարարությանը նվիրված կտավները, Ա. Բեխլուզադեի, Տ. Թազիևի և ուրիշների պեյզաժները։ Փոքր ավանդ չեն ներմուծել նկարիչները ժողովրդական արվեստի հնագույն ձևերից մեկի՝ գորգագործության մեջ։ Արվեստի վաստակավոր գործիչ Լյատիֆ Քերիմովի ղեկավարությամբ ադրբեջանական գորգագործները ստեղծել են սյուժետային մեծ գորգեր։

Սովետական Ադրբեջանի քանդակագործները կերտել են մի շարք մոնումենտալ հուշարձաններ։ Դրանց թվին են պատկանում Ադրբեջանական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ Ջ. Բարյազիևի կերտած Վ. Ի. Լենինի տասնմեկմետրանոց արձանը, որը ճշմարտացի, պարզ ու միաժամանակ հոյակապ, մոնումենտալ կերպով վերստեղծում է ռևոլյուցիայի առաջնորդի կերպարը, Ս. Մ. Կիրովի գրանիտե արձանը, որի հեղինակն է ՍՍՌՄ Կերպարվեստների ակադեմիայի իսկական անդամ ու Ադրբեջանական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ քանդակագործ Պ. Սաբսայը։ Ադրբեջանական քանդակագործներ Ֆ. Աբդուրախմանովը, Ջ. Կարյազդին և ուրիշները կերտել են ադրբեջանական գրականության կլասիկների՝ Նիզամու, Ֆիզուլու, Նաթեանի, Մ. Ֆ. Ախունդովի, Սաբիրի, Ն. Նարիմանովի, Ջ. Ջաբարլիի, Սամեդ Վուրգունի, ինչպես նաև կոմպոզիտոր Ուզեիր Հաջիբեկովի հիանալի պորտրեները։

Սովետական իշխանության տարիներին բազմադարյան պատմություն ունեցող ադրբեջանական ժողովրդի ճարտարապետությունը առաջին անգամ ի սպաս դրվեց ժողովրդին։ Բնակելի տների, դպրոցների, ակումբների, մանկա-

կան հիմնարկների, հիվանդանոցների և այլ կուլտուր-կենցաղային կառույցների շինարարությունը դրվեց ճարտարապետության ուշադրության կենտրոնում։

Փոխվեց ռեսպուբլիկայի քաղաքների ճարտարապետական դեմքը։ Ադրբեջանի ճարտարապետության հաջողությունները առավել վառ կերպով երևվում են Բաքվում։ Քաղաքի հրապարակների ու փողոցների վերակառուցումը, ամբողջ նոր շրջանների ստեղծումը վերափոխեցին Բաքուն, որը դարձավ մեր Հայրենիքի ամենագեղեցիկ քաղաքներից մեկը։ Բավական է ասել, որ Սովետական իշխանության տարիներին, նախառևոլյուցիոն շրջանի հետ համեմատած, երեք անգամ մեծացել է քաղաքի բնակելի տարածությունը և քառասուն անգամ ավելացել են կանաչ տարածությունները։ Քաղաքի մի շարք հրապարակներում սկսեցին ձևավորվել ճարտարապետական անսամբլներ, որոնք վկայում են ռեսպուբլիկայի ճարտարապետների հասուն վարպետությունը։ Ռեսպուբլիկայում ծնունդ առան նոր քաղաքներ, որոնք, չնայած իրենց երիտասարդ հասակին, դարձան Ադրբեջանի կարևոր կենտրոնները։ Բավական է հիշել Մինգեչաուրը և Սումգայիթը, որոնք վեր խոյացան այնտեղ, ուր ընդամենը 12 տարի առաջ անպտուղ անապատ էր։

Կատարելով սովետական ճարտարապետության ժամանակակից խնդիրները, Ադրբեջանի ճարտարապետները շատ բան են արել Սովետական Ադրբեջանի սոցիալիստական ճարտարապետության ազգային ինքնատիպության ձևավորման համար։ Նրանք կարողացան վճռականորեն հաղթահարել դժվարությունները ու խոչընդոտները, որոնք կանգնած էին նրանց ճանապարհին, դեն նետել ֆորմալիզմը և կոնստրուկտիվիզմը, վերացնել ոչ-քննադատական մոտեցումը ազգային ճարտարապետության տրադիցիաներին և ավելորդաբանության ու ցուցադրական մոնումենտալության վնասակար տենդենցները։ Այժմ ադրբեջանական ճարտարապետները լայնորեն օգտագործում են սովետական ճարտարապետության հարուստ փորձը, շոշափելի ավանդ են ներդնում սոցիալիստական ճարտարապետության մեջ։

Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, Ադրբեջանական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ ճարտարապետ Միքայել Հուսեինովի ստեղծագործության և մինչև 1946 թվականն ականավոր ճարտարապետ Սադիխ Դագաշևի հետ միասին կատարած աշխատանքներում իրենց արտացոլումն են գտել սոցիալիստական ռեալիստական ճարտարապետության լավագույն գծերը։ Նրա նախագծերով կառուցված շենքերում Բաքվում և այլ քաղաքներում (Նիզամու անվան կինոթատրոնը, Կոնսերվատորիան, Նիզամու թանգարանը, Ադրբեջանական ՍՍՌ տաղավարը ՍՍՌՄ Ժողովրդական տնտեսության նվաճումների համամիութենական ցուցահանդեսում և այլն) նոր գաղափարական հիման վրա ստեղծագործորեն զարգացված են ադրբեջանական ժողովրդի ազգային ճարտարապետության լավագույն տրադիցիաները։

Իրենց կառուցվածքով արդիական շենքերում լայնորեն օգտագործվում են գունեղ դետալները և ադրբեջանական հնագույն զարդանկարները։ Մ. Հուսեինովի նախագծերում, ինչպես նաև նրա նախագծերով կառուցված շենքերում, զգացվում է արտաքին գեղեցկության հետ միաժամանակ խորը իմաստ։ Նրանց մեջ մոնումենտալությունը բարձրանում է մինչև հրաշալի պարզության մակարդակը։

Ներկայումս Բաքվում ու Ադրբեջանի այլ քաղաքներում կառուցվում են նոր թանգարաններ, թատրոններ, գրադարաններ, կուլտուրայի և սպորտի պալատներ, ակադեմիական քաղաքիկ և այլն։ Դրանց նախագծերը պատկանում են ադրբեջանական սովետական ճարտարապետներին։

Խոշոր նվաճումներ ունի ադրբեջանական ժողովուրդը գիտության ու տեխնիկայի բնագավառում։ Երկիրը, որը մոտ անցյալում չուներ ո՛չ ազգային գիտական ու տեխնիկական կադրեր, ո՛չ գիտական հիմնարկներ ու բարձրագույն ուսումնական հաստատություններ, կարճ ժամանակամիջոցում անճանաչելիորեն կերպարանափոխվեց։ Ռեսպուբլիկայում Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից ձեռնարկվեցին համապատասխան միջոցառումներ՝ բնակչության անգրագիտությունը վերացնելու և գիտա-մանկավարժական կադրեր դաստիարակելու ուղղությամբ։ Ռուս գիտնականների օգնությամբ բացվեցին զանազան մասնագիտական դասընթացներ և բարձրագույն ուսումնական հաստատություններ։

Քառասուն տարվա ընթացքում բարձրագույն ուսումնական հաստատությունների թիվը Ադրբեջանում հասավ տասներկուսի։ Նրանցում կրթություն են ստանում 33 հազարից ավելի սովորողներ։ Ադրբեջանի Պետական համալսարանում սովորում են 7300 ուսանող, Ադրբեջանական Մանկավարժական ինստիտուտում՝ 7100 ուսանող, Նավթի ու քիմիայի ինստիտուտում՝ 5600։ Ադրբեջանի բարձրագույն ուսումնական հաստատությունները նախապատրաստել են մոտ հարյուր տասը հազար բարձրորակ մասնագետներ, որոնցից 37 հազարը գիտա-մանկավարժական աշխատողներ են, 17 հազարը՝ ճարտարապետներ, 11 հազարը՝ բժիշկներ, 7 հազարը՝ գյուղատնտեսության մասնագետներ։ Ադրբեջանական բարձրագույն ուսումնական հաստատությունները ավարտած մասնագետների մի մասը այժմ աշխատում է մեր անծայրածիր Հայրենիքի տարբեր անկյուններում՝ Ղազախստանում, Ուզբեկստանում, Բաշկիրիայում, Ուրալում, Սիբիրում, Հեռավոր Արևելքում, սոցիալիստական արդյունաբերության ու գյուղատնտեսության տարբեր բնագավառներում։

Ռեսպուբլիկայում մեծ ուշադրություն է դարձվում նաև գիտա-հետազոտական աշխատանքներին, որոնք կատարվում են ավելի քան 80 գիտական հիմնարկներում։ Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան Հանդիսանում է գիտական մտքի կենտրոն, որը միավորում է գիտության բոլոր բնագավառներն ընդգրկող 20-ից ավելի գիտական հիմնարկներ։ Այնտեղ աշխատում են մոտ 5 հազար գիտաշխատողներ, այդ թվում 220 պրոֆեսորներ ու գիտության դոկտորներ և 2000-ից ավելի գիտության թեկնածուներ։ Գիտության ու տեխնիկայի 127 գործիչների շնորհված է Ստալինյան մրցանակ։

Գիտությունների ակադեմիայի գիտնականները մշակում են քիմիայի, ֆիզիկայի, մաթեմատիկայի, տեխնիկայի, երկրաբանության, կենսաբանության, պատմության, բանասիրության, արվեստի, տնտեսագիտության, փիլիսոփայության, արևելագիտության և այլ պրոբլեմներ։ Սովետական իշխանության տարիներին Ադրբեջանի գիտնականները հասել են նշանակալից հաջողությունների գիտության շատ բնագավառներում։

Գիտնականները մեծ աշխատանք են կատարել հումանիտար գիտությունների բնագավառում։ Հնագետները կատարել են մի շարք հնագիտական խոշոր աշխատանքներ, որոնցից կարևորագույնն են պեղումները Մինգեչաուրում,

Օրեն-կալայում և այլն։ Պատմաբանները հրատարակել են մենագրական հետազոտություններ, որոնք նվիրված են հին, միջնադարյան, նախառևոլյուցիոն և սոցիալիստական Ադրբեջանի պատմության տարբեր ժամանակաշրջաններին։ Ավարտվում է եռահատոր «Ադրբեջանի պատմության» կոլեկտիվ աշխատանքը։

Զգալի նվաճումներ կան ադրբեջանական գրականության պատմության ուսումնասիրության բնագավառում։ Ստեղծված են մի շարք մենագրական աշխատություններ, որոնք նվիրված են առանձին գրողներին ու գրականության պրոբլեմներին։ Դրանցից պետք է նշել եռահատոր «Ադրբեջանական գրականության պատմությունը», որի սովետական գրականության ժամանակաշրջանը ընդգրկող երրորդ հատորը արդեն հրատարակվել է, իսկ I և II հատորները տպագրվում են և շուտով լույս կտեսնեն։ Լեզվաբանները հետազոտել են ադրբեջանական լեզվի պատմության և տեսության հարցերը, ուսումնասիրել են ադրբեջանական լեզվի բարբառները, կազմում են բառարաններ։

Հրատարակված են և պատրաստվում են տպագրության մի շարք աշխատություններ ճարտարապետության ու արվեստի բնագավառից։ Ավարտվում է երկհատորանոց «Ադրբեջանի ճարտարապետությունը»։ Ուսումնասիրվում են ադրբեջանական թատրոնի, երաժշտության, կերպարվեստի ու կիրառական արվեստի պատմությունները։ Ժողովրդական տնտեսության կարիքների հետ սերտ կապի մեջ են գտնվում տնտեսագետների աշխատությունները։ Նավթարդյունաբերության և գյուղատնտեսության էկոնոմիկայի բնագավառում իրականացված են գործնական նշանակություն ունեցող մի շարք հետազոտություններ։ Եռանդուն աշխատանք է տարվում ադրբեջանական ժողովրդի հասարակական ու փիլիսոփայական մտքի պատմությունը ուսումնասիրելու ասպարեզում։ Ուսումնասիրվում են դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմի հարցերը։ Ադրբեջանի արևելագետները աշխատանքներ են կատարում Մերձավոր ու Միջին Արևելքի երկրները՝ Իրանը, Թուրքիան և արաբական երկրները ուսումնասիրելու ուղղությամբ։

Ընդլայնվում են Գիտությունների ակադեմիայի ինստիտուտների գիտահետազոտական աշխատանքները։ Մոտակա տարիներին նախատեսվում է փորձառական բժշկության, ավտոմատիկայի և տելեմեխանիկայի, օրգանական քիմիայի, նյութական կուլտուրայի պատմության, լեզվագիտության, փիլիսոփայության և այլ գիտա-հետազոտական նոր ինստիտուտների ստեղծում։ 1958 թվականին Կիրովաբադում ստեղծվեց Ադրբեջանական Գյուղատնտեսական ակադեմիան, որը միավորում է տասը գիտական հիմնարկներ։

Գիտա-տեսական ու գործնական մեծ աշխատանքներ են կատարվում բժշկության բնագավառում։ Բարձրորակ կադրեր նախապատրաստելու գործում բժշկությունը առաջին տեղն է գրավում ռեսպուբլիկայում։ Ադրբեջանում կան գիտա-բժշկական 9 ինստիտուտներ։

Ադրբեջանի Ժողովրդական Տնտեսության Խորհուրդը նույնպես իր կազմում ունի գիտա-հետազոտական ինստիտուտներ, որոնք մշակում են նավթարդյունաբերության հետ կապված տարբեր պրոբլեմներ։

Ռևոլյուցիոն շարժման պատմության ու Կոմունիստական պարտիայի պատմության ուսումնասիրման, ինչպես նաև մարքսիզմ-լենինիզմի կլասիկների ստեղծագործությունների հրատարակման գործում զգալի աշխատանք է կատարել Ադրբեջանի ԿՊ Կենտկոմին առընթեր Պարտիայի պատմության ինս-

տիտուտը (ՍՄԿՊ Կենտկոմին առընթեր Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի ֆիլիալը)։

Մեծ է մամուլի նշանակությունը աշխատավոր մասսաների լայն խավերի մեջ սովետական դաստիարակությունը, գրականության ու արվեստի նվաճումները տարածելու գործում։

Ազգային մամուլը առանձնահատուկ դեր է կատարում ժողովրդի կյանքում, աշխատավորների կուլտուրական զարգացման մեջ, նրանց գաղափարական-քաղաքական աճման մեջ։ Մամուլն արտացոլում է կուլտուրական շինարարության բոլոր նվաճումները։ Այդ առանձնապես վերաբերում է պարբերական մամուլին։ Սովետական իշխանության նախօրեին Ադրբեջանում հրատարակվում էր ընդամենը 15 լրագիր, ապա այժմ նրանց թիվը աճել է մինչև 118։ «Բակինսկի ռաբոչի» հնագույն թերթը հրատարակվում է 1906 թվականից ռուսերեն լեզվով, ադրբեջաներեն լեզվով «Կոմունիստ» թերթը՝ 1919 թվականից։ Դրանցից բացի լույս են տեսնում նաև այլ թերթեր ռուսերեն, ադրբեջաներեն և հայերեն լեզուներով։

Ռեսպուբլիկայում հաշվվում է 2170 գյուղական գրադարան։ Ըստ 1954 թվականի, Սովետական Ադրբեջանում յուրաքանչյուր բնակչին ընկնում է, միջին հաշվով, 2,5 գրադարանային գիրք։ Ռեսպուբլիկայի գրքային ֆոնդը օր-օրի ավելանում է։

Դյուրին խնդիր չէ, թեկուզ ընդհանուր գծերով, ներկայացնել ադրբեջանական ժողովրդի նվաճումները կուլտուրական շինարարության բնագավառում, որին պարտիան և Սովետական կառավարությունը առանձնահատուկ ուշադրություն են նվիրում։ Ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանով նախատեսվում է կապիտալ խոշոր ներդրումներ դիտա-հետազոտական, կուլտուրական և կուլտուր-լուսավորական հիմնարկների շինարարության մեջ։ Բավական է նշել, որ Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի գծով կապիտալ ներդրումների ծավալը յոթնամյակում կկազմի 156,6 միլիոն ռուբլի։

Իր վերածննդի քառասնամյակն ադրբեջանական ժողովուրդը դիմավորում է արդյունաբերության և գյուղատնտեսության, գիտության և լուսավորության, գրականության ու արվեստի բնագավառներում հսկայական նվաճումներով։ Լենինյան հանճարեղ ազգային քաղաքականության անշեղ կենսագործման շնորհիվ, ադրբեջանական ժողովուրդը դարձավ եղբայրական սովետական ժողովուրդների մեծ ընտանիքի իրավահավասար անդամը։ Քառասուն տարիների ընթացքում, կոմունիստական հասարակություն կառուցելու համատեղ պայքարում, էլ ավելի ամրապնդվեցին սոցիալիստական ազգերի անխախտ բարեկամության կապերը, էլ ավելի միաձույլ դարձան նրանց շարքերը։ Ադրբեջանի աշխատավորները, հավատարիմ լինելով ժողովուրդների մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի պատգամներին, երախտագիտության խոր զգացմունքով են համակված Կոմունիստական պարտիայի հանդեպ՝ ապահովված երջանիկ, բերկրալի կյանքի համար, ժողովրդական լուսավորության, դրության, գրականության ու արվեստի զարգացման մեջ նվաճած մեծ հաջողությունների համար։

РАЗВИТИЕ СОЦИАЛИСТИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ В АЗЕРБАЙДЖАНЕ

М. АРИФ (Баку)

(Резюме)

После установления Советской власти в Азербайджане были осуществлены необходимые мероприятия для ликвидации унаследованной от буржуазно-помещичьего строя отсталости, для приобщения азербайджанского народа к достижениям мировой культуры и науки. По инициативе Коммунистической партии и Советского правительства были открыты многочисленные школы, высшие учебные заведения и другие научно-исследовательские учреждения, в которых с помощью русских специалистов за короткий период были подготовлены национальные кадры интеллигенции, осуществившие культурную революцию в Азербайджане.

Благодаря претворению в жизнь ленинской национальной политики некогда отсталая, полуколониальная страна с почти сплошным неграмотным населением за 40 лет стала одной из цветущих советских республик с высокоразвитой социалистической культурой. Расцвели национальные по форме, социалистические по содержанию литература, искусство, наука. За годы Советской власти в литературе возник и развился жанр романа, который в досоветский период был в зачаточном состоянии. То же самое можно сказать и об азербайджанском театре, опере, балете, кино, изобразительном искусстве и архитектуре.

Азербайджанский народ добился крупных успехов и в области науки. За 40 лет высшие учебные заведения республики дали стране 110 тысяч высококвалифицированных специалистов, работающих не только в Азербайджане, но и в других братских республиках. Академия наук Азербайджанской ССР объединяет свыше 20 научно-исследовательских институтов, в которых работает 220 профессоров и докторов наук и более 2000 кандидатов наук. Другой многочисленный отряд ученых работает в научно-исследовательских учреждениях Совета Народного Хозяйства республики и в основанной в 1958 г. в Кировабаде Азербайджанской сельскохозяйственной академии, объединяющей 10 научно-исследовательских институтов.

В досоветский период в Азербайджане издавалось всего 10 газет, между тем как сейчас их число достигло 118-ти. В настоящее время на каждого жителя республики приходится $2^1/_2$ книги в библиотеках, причем с каждым днем растет как число библиотек, так и их книжный фонд.

При взаимной помощи других братских народов, под руководством Коммунистической партии Советский Азербайджан стал активным борцом за построение коммунизма в нашей стране и всемерно способствует развитию социалистической культуры и науки советского народа.